ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Պ-1131³-01.08.2025-ՏՏԳՇ-011/0

Տեղեկանք փոփոխվող հոդվածների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Անասնաբուժության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-137-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի- 37-րդ կետում «տնտեսությունները,» բառից հետո լրացնել «կենդանիների բուծարանները, կացարանները,» բառերով:~~3-րդ կետում «իրավաբանական անձանց» բառերից հետո լրացնել «լիցենզավորման ենթակա» բառերով:~~

Հոդված 2. Օրենքի ~~6-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել 8.1 կետով.~~

~~«8.1) անասնաբուժական գործունեության լիցենզավորման կարգը.»~~ 34-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 35-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Սույն հոդվածով նախատեսված պարտականությունները և սահմանափակումները տնային և թափառող, ծառայողական, ցուցադրման, սպորտային կամ ժամանցային միջոցառումների համար օգտագործվող կենդանիների մասով գործում են այնքանով, որքանով չեն հակասում «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի կարգավորումներին:»:

~~Օրենքի 34-րդ հոդվածը, 35-րդ հոդվածի 1-ին մասը, 35-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին,2-րդ,3-րդ,4-րդ,5-րդ,6-րդ,7-րդ,8-րդ,10-րդ,11-րդ,14-րդ,17-րդ,18-րդ, 19-րդ կետերը, 35-րդ հոդվածի 2-րդ մասի 16-րդ կետի «բ» ենթակետը ուժը կորցրած ճանաչել:~~

Հոդված 4. ~~Օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի 16-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.~~

~~«ա. գառների, ուլերի, խոզերի, հորթերի պոչերի անդամատումը,»:~~

~~***Հոդված 5.***~~ Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: